

## Տ. ՓԱՎՍՏՈՍ ՔԱՀԱՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ

(ավազանի անունը՝ Հովհաննես)

Ծնվել է 1976 թ. Շիրակի մարզի Հոռոմ գյուղում:

1982-1993 թթ. սովորել և ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը:

1993-1998 թթ. սովորել և ավարտել է Արթիկի Ինդուստրիալ Տեխնոլոգիական տեխնիկումի Ավտոճանապարհային բաժինը:

1994-1996 թթ. ծառայել է Հայաստանում տեղակայված ՌԴ սահմանապահ զորքերում:

2000-2002 թթ. մասնակցել է ՔԴՔԿ-ի կողմից կազմակերպված կրոնի ուսուցիչների պատրաստման և վերապատրաստման դասընթացներին և ստացել համապատասխան վկայական: Միևնույն ժամանակ դասավանդել է Հոռոմի միջնակարգ դպրոցում որպես կրոնի ուսուցիչ:

2002-2004 թթ. սովորել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի քահանայից պատրաստման լսարանում:

2004 թ. հոկտեմբերի 3-ին, ձեռամբ Տ. Նավասարդ եպիսկոպոս Կճոյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2004 թ. հոկտեմբերի 10-ին Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում, ձեռամբ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:

Ունի երեք զավակ: